ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**ЗАМЕСТИТЕЛЬ
ГЕНЕРАЛЬНОГО СЕКРЕТАРЯ**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

GENERAL SECRETARY

**0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 , ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,www.escs.am**

N---------- ---------- ----------2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բրուտյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 11.05.2020թ գնանշման հարցման ընթացակարգով թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով կազմակերպված ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքների գնման գործընթացին հայտ է ներկայացրել <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ն, որն եղել է միակ մասնակիցը: ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/ մասով սահմանված ժամկետում, տվյալ դեպքում մինչև 12.05.2020թ ժամը 17:00-ը, <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվեր հայտի ապահովման բնօրինակը՝ բանկային երաշխիքի ձևով, սակայն այն չի ներկայացվել և վերջինիս հայտը 13.05.2020թ գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է, գնման գործընթացը հայտարարվել է չկայացած, լուծարելով նաև ARMEPS համակարգում, և <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

01.06.2020թ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոք է ներկայացրել նաև <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ն, խնդրելով նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնելու հայտը մերժելու և

ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը, պնդելով, որ հայտի ապահովման բնօրինակը ժամկետում չներկայացնելու պարագայում իրեն պետք է տրվեր անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, ինչը հանձնաժողովը չի իրականացրել, քանի որ մասնակցի հայտը գնահատելիս վերջինս առաջնորդվել է Կարգի 42-րդ կետով: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 19.06.2020թ կայացված և 23.06.2020թ հրապարակված որոշմամբ բավարարվել է <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի բողոքը (կցվում է):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը իրավապարտադիր է, խնդրում եմ Ձեր մեթոդական օժանդակությունը այն իրականացնելու՝ գնման գործընթացը շարունակելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Signed by: GASPARYAN VAHRAM 3203740222

Կատ. ՀՀԿԳՄՍՆ գնումների և հաշվապահական հաշվառման
վարչության գնումների կազմակերպման բաժին
հեռ. 59-96-66՝ /093-33-01-73/